

«ՆԱԶՈՎՐԵՑԻ» ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՐՑԵՐ

ԿԱՌԼԵՆ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Հովհաննեսի Ավետարանում (հայերեն) նշված է, որ Պիղատոսը խաչի վրա մի տախտակ դրեց՝ «Յիսուս Նազովրեցի թագաւոր հրէից» մակագրությամբ¹: Մատթեոս և Ղուկաս ավետարանիչներն էլ հաղորդում են, որ տախտակի վրա Հիսուսի մեղադրանքի գիրն էր: Գեղանկարչության մեջ և կիրառական արվեստներում նույն դեպքը արտացոլելիս, սովորաբար, չորս գիր են նշում. «Յ. Ն. Թ. Հ.», որը նույն մեղադրանքի հապավված տարբերակն է:

Այսպիսով, մեղադրանքը բաղկացած է երկու մասից «Յ. Ն.» և «Թ. Հ.»:

Երկրորդ մասը՝ «Թ. Հ.»-ն, դյուրավ հասկանալի է: Հիսուսին մեղադրում են, թե իբր նա իրեն հրեաների թագավոր է հռչակել, մինչդեռ հրեաները Հոռմի կայսերն են ճանաչում իբրև իրենց թագավոր: «Մենք թագավոր չունինք բացի կայսրից»², – աղաղակում են նրանք: Հիսուսը չի ընդունում, թե ինքը հրեաների թագավորն է: Այդ մասին ուղղակի հարց տվող Պիղատոսին առանց տատանվելու պատասխանում է, թե՛ դու ես դա ասում: Իսկ ինքը ուրիշ թագավորություն ունի. «Իմ թագավորությունն այս աշխարհից չէ» (Հովհ., ԺԸ, 36): Այսպիսով, «Թ. Հ.»-ի պարագայում Հիսուսը մեղադրվում էր իբրև իշխանությանը ինքնակոչ տիրանալու ձգտող անձնավորություն:

Խնդիրը շատ ավելի բարդ է «Յ. Ն.» -ի պարագայում:

Ի՞նչ է նշանակում «Նազովրեցի» եզրը: Համարաբար «Նազովրեցի»-ն ստուգաբանում է իբրև «Նազարեթ քաղաքէն»³: Հայ բարձրաստիճան հոգևորականներից ոմանք նույնպես նման կարծիք են հայտնել՝ գրավոր թե բանավոր: Անգլերեն լեզվով Նոր Կտակարանում մշտապես գրվում է Նազարեթի ձևը (of Nazareth): Սա ընդունելի չէ: Տվյալ եզրն առնչություն չունի «Նազարեթ» բառի հետ: «Նազարեթը», անշուշտ, հայտնի էր հունարենին և ռուսերենին⁴: Այդ տեղանունը բազմիցս գործածված է Նոր Կտակարանի տեքստերում: Ոչ մի պարագայում, սակայն, «Նազարեթ» չի գործածվում «Հիսուս Նազարեթցի» բառակապակցության մեջ: Հարցի պատասխանը պետք է փնտրել «Նազովրեցի» եզրի բովանդակության մեջ:

¹ Աստվածաշունչ, եբրայական և հունական բնագրերից թարգմանված, Լոնդոն, 1956:

² նույն տեղում, Հովհան., ԺԹ, 45:

³ Համարաբար Աստվածաշունչ Մատեանի, վեր. Վահան Գ. Սահակյանի աշխատասիրությամբ, Բեյրութ, 1963, էջ 234:

⁴ Նոր Կտակարան (հունարեն), անգլերեն առաջաբան և բիրլիոգրաֆիա, Գերմանական Աստվածաշնչային Ընկերության հրատարակություն, Շտուտգարդ, 1994, Библия, М., 1990:

Հայերեն Աստվածաշնչում բազմաթիվ են ացի, եցի վերջածանցներով բառերը (դևտացի, փարիսեցի և այլն): Դրանք, մեծ մասամբ, որն է առնչություն չունեն կոնկրետ բնակավայրի հետ, որովհետև նման անուններով տարածք գոյություն չի ունեցել տվյալ միջավայրում: Այդ տիպի վերջածանցների առկայությունը լուրջ նշանակում է, որ տվյալ անձնավորությունը որոշակի առաքելության կրողն է (օրինակ՝ դևտացի), կամ սոցիալական որոշակի խավի ներկայացուցիչը (ինչպես՝ փարիսեցի): «Նագովր» անունով տեղանք նույնպես գոյություն չի ունեցել: «Նագովրեցի» հասկացությունը, ինչպես ստորև կտեսնենք, սոցիալ-հասարակական որոշակի իրավիճակի կրողն է: Ուստի, կարծում ենք, որ «ացի» և «եցի» վերջածանցներով բառերից շատերը (կան, որ, իրոք, կապված էին որոշակի տեղանքի հետ) արդի հայերենում ժամանակավրեպ են և միայն շեղում են ուշադրությունը:

Այսպիսով, «Նագովրեցի»-ի պարագայում մերժվում է Նագարեթի տարբերակը, հերքվում է նաև որոշակի բնակավայրի հասցեագրված լինելու պարագան:

Կա նաև «Նագովրեցու» գործածության մի մերժելի տարբերակ ևս: Հայկական ավանդության մեջ «Նագովրեցին» դարձել է պարզապես Հիսուս Քրիստոսի մի երրորդ անունը: Սա էլ իր հերթին ավելի է խճճում հարցը՝ հեռացնելով իր բուն իմաստից: Գրվում են բազմաթիվ գեղարվեստական թե հասարակագիտական երկեր, որոնցում «Նագովրեցի»-ն օգտագործվում է, առանց հեռավոր անգամ անդրադառնալու այդ եզրի գաղափարական առաքելությանը: Պ. Զեյթունցյանի «Հիսուս Նագովրեցին և նրա երկրորդ աշակերտը» թատերախաղը հաջողությամբ բեմադրվեց Երևանի դրամատիկական թատրոնում: Գործը տաղանդավոր է: Հեղինակին հաջողվել է լուծել կերպարի կերտման՝ մարդու այլասերման սոցիալական արմատների և ապականման հասարակական մեխանիզմի հարցերը: Բայց ի՞նչ կապ ունի այստեղ «Նագովրեցին»: Գործը նույն հաջողությամբ կաշխատեր առանց այդ եզրի: Վերջերս էլ լուր տարածվեց, թե բեմադրության է պատրաստվում «Մարիամ Նագովրեցի» խորագրով մի թատերախաղ: Սա արդեն նշանավորում է «Նագովրեցի» եզրի մոդա դառնալը: Ավելին, պարզապես արտուրդ է, որը վկայում է, թե որքան հեռու է մեր հասարակայնությունը «Նագովրեցի»-ի հոգևոր բովանդակությունն ընկալելուց:

«Նագովրեցին» սուբյեկտ (անձնավորություն) չէ, ինչպես որ սուբյեկտություն է թողնում հայերենով գրված այդ բառը: «Նագովրեցին» մի ուրիշ սուբյեկտի՝ Հիսուսի հատկանիշն է, որն անկապտելի է, քանի որ ձեռք է բերված իր մորական արգանդից և մշտական, քանի որ Հիսուսի ուսմունքի մարմնավորման խարիսխն է: Խնդիրը ոչ թե «Նագովրեցի»-ով Հիսուսին հավելյալ անուն տալն է, այլ այդ եզրի պարունակած հիմնական հատկանիշը՝ Աստծուն անվերապահ նվիրվածության ընդգծումը: «Նագովրեցի» բառը հեռու է այդ առաքելությունը կատարելուց: Ուստի, հետագա շարադրանքում ժամանակավորապես պիտի օգտագործենք հունարենը՝ Նագորայոս (բառը մեծատառով ենք գրում, քանի որ եզրի հանգամանք ունի):

Բայց ի՞նչ է նշանակում Նագորայոս:

Երևույթին նախապես հանդիպում ենք դեռևս Հին Կտակարանում, Մովսեսի Հնգամատյանի «Թուոց» գրքում: Մի ամբողջ գլուխ նվիրված է դրա մեկնությանը (6, 1–21): Տեքստը հայերեն Աստվածաշնչի մեջ մատուցվում է հետևյալ կերպ. «Եթե մի մարդ կամ կին ուխտաւորի ուխտ անէ իր անձը Եհովային ուխտելու համար...»: «Ուխտի», «ուխտավորի» փոխարեն հունարեն նշվում է «Նազորայոս»⁵, ռուսերենում՝ «Նազորեյ»⁶: Ի դեպ, «Նազորայոս» է նշվում նաև Պիդատոսի հունարեն ամբաստանագրում⁷:

Այսպիսով, հայերեն Աստվածաշնչում հենց ի սկզբանէ դուրս է մնացել Նազորայոս եզրը և փոխարինվել է «ուխտաւոր» բառով: Մինչդեռ այդ եզրը պահպանել են հունարենը⁸, ռուսերենը⁹: Ի տարբերություն Նոր Կտակարանի տեքստի, Հին Կտակարանում անգլերենով հաղորդվում է Նազորայոս տերմինը և որոշ հնչյունափոխությամբ գրվում է Նազարայթ (Nazarite)¹⁰: Սա եզակի երևույթ է: Մնացած բոլոր առիթներով, բազմաթիվ անգամ գրվում է «Նազարեթցի»:

«Ուխտաւոր» եզրը, թերևս, ճիշտ է «Թուոց» գրքում, քանի որ խոսքը արդեն հասուն այր մարդու կամ կնոջ մասին է: Բայց «Նազորայոս» լինում են մայրական արգանդից սկսած, այսինքն, նոր ձևավորվող պտղի հասակից: Մի հանգամանք, որը բացառում է «ուխտ անելը» կամ «ուխտավորությունը»: Քանի որ դա որոշ բանական տարիքի արդյունք է:

«Նազորայոսի» և «Ուխտավորի» անհամատեղելիությունն արդեն նկատելի է Դատավորաց գրքում, Սամփսոնին նվիրված հատվածում (13, 5): Տեքստը հայերեն Աստվածաշնչում հետևյալն է. «Դու կյդանաս և մի որդի կծնես և նորա գլխի վերայ ածելի պիտի չգայ, նորա համար, որ այն տղան արգանդից Աստուծո ուխտաւորը պիտի լինի»: Հունարենում «ուխտավորի» փոխարեն «Նազորայոս» է գրված¹¹:

Հիսուսն էլ ամենակատարյալ Նազորայոս էր. ոչ թե ուխտավոր իմաստով, որովհետև մոր արգանդում նա ուխտ անել չէր կարող, այլ պարզապես նվիրաբերված էր Աստծուն, ավելին, հենց Աստծո որդին էր: Ուստի, Հիսուսին վերաբերող տեքստերում «ուխտաւոր» բառը այլևս ընդունելի չէր և փոխարենը որդեգրվեց «Նազովրեցին»: Սա արմատով գրեթե նույնական էր «Նազորայոսին», իսկ վերջածանցը կրկնում էր գոյություն ունեցող ոճավորումը: Այնուամենայնիվ, հենց այդ ոճավորումն էլ խառնաշփոթություն էր ստեղծում:

Նազորայոսությունը նշանավորվում էր Աստծո շնորհած վիթխարի գործությամբ: Դա մի դեպքում դրսևորվում էր ֆիզիկական հզոր ուժի ձևով (Սամփսոն), մի ուրիշ դեպքում իմաստնության ձևով (Սամուել, քանի որ նա էլ նվիրաբերված էր Աստծուն և կրում էր նազորայոսության արտաքին հատկանիշները (Ս

⁵ Նոր կտակարան (հունարեն):

⁶ Библия, числа 6, 1–4.

⁷ Նոր կտակարան (հունարեն), Kata IWANNIN, 19, 19:

⁸ Հին կտակարան–Septuaginta, Շտուտգարտ, 1979, Apidmoi, 6, 1–4:

⁹ Библия, числа 6, 1–4.

¹⁰ The Holy Bible, Nashville, Tennessee, 1987, Numbers, 6, 2:

¹¹ Septuaginta, Kpitai, 16, 17.

թագ. 11): Մի երրորդ պարագայում Սուրբ Հոգով ամբողջովին պարուրման շնորհիվ մարդկային կյանքի վերակենդանացման կարողության ձևով (Հիսուս):

Հիսուսին հարուցված հիմնական մեղադրանքը հենց այս կետում էր: «Յ. Ն.»-ն (Հիսուս Նազորայտսը) ոչ միայն տեսականորեն («Իմ թագավորությունը այս աշխարհից չէ»), այլև հատկապես գործնական վարքով արմատական հակասության մեջ էր տիրող կրոնի հետ: Նա, փաստորեն, մերժում էր գոյություն ունեցող հրեական տիրապետող աշխարհայացքը և հաստատում իր նոր գաղափարախոսությունը՝ մարդու փրկության, նրա հարության և հավիտենական կյանքի մասին:

Հիշենք Պողոս առաքյալի գրույցը Ագրիպայի հետ: Առաքյալը պնդում էր, թե Աստված խոստում էր տվել հրեաներին, որոնց բոլոր 12 ցեղերը «զիջեր ու ցերեկ» այդ հույսով սպասում են: Ու նրանց առջև հնարավորություն է բացվում Հիսուս Նազորայտի գործունեությամբ: «Ի՞նչ անհաւատալի բան է երևում ձեզ, – բացականչում է Պողոս առաքյալը, – որ Աստուած մեռելներին յարուցանում է»: (Գործք, ԻԶ, 6–8):

Կարևոր է ընդգծել, թե՛ Հիսուսի նազորայտությունը այնքան գորեղ էր, որ առաքյալների հետագա բոլոր հրաշագործությունները իրականություն են դառնում հենց այդ անունով: Պատահական չէ, որ քահանայապետերը հենց «Յ. Ն.» կետում աղաղակում են և պահանջում՝ «խաչիր դրան»: «Մենք օրենք ունենք, – հայտարարում են նրանք, – և մեր օրենքի համեմատ պետք է մեռնի, որովհետև իր անձն Աստծոյ որդի արաւ» (Հովհ., ԺԹ, 6-7): Իրոք, կար նման օրենք, որը Մովսեսին թելադրել էր Եհովան՝ հատկապես Նազորայտի վարքը սահմանազօծելու համար: Ըստ այդ օրենքի, Եհովային իր անձը նվիրաբերողը պիտի երբեք մեռած մարմնի չմոտենար, նույնիսկ եթե իր ներկայությամբ հարազատ մեկն էր մեռնում՝ հայրը, մայրը, եղբայրը կամ քույրը (Թուոց, Զ, 6-7):

Քահանայապետերը նույնացրին Հիսուս Նազորայտին և Աստծո որդուն, միաժամանակ հայտարարելով, թե՛ մեկը կեղծ Նազորայտ էր, մյուսը՝ Աստծո ինքնակոչ որդի, քանի որ նրանք խախտում և ոտնատակ են տալիս հաստատված օրենքը:

Փաստորեն, տեղի էր ունենում նորի և հնի պայքար, որն արյունալի ընթացք ստացավ: Մարդու հարության գաղափարը հակադրվում էր Մովսեսի հաստատած կաղապարին. սա էր արմատական հակասության մեխը: Նոր աշխարհայեցողությունը փոխարինելու էր գալիս հնին, ոչնչացնելով նրա կառուցած պատնեշները: «Յիսուս Նազորայտի» ուսմունքն ու գործը ուղղակի սպառնում էին քահանայապետերի և նրանց օրենքով ապրող հասարակության գոյությանը: Ուստի, «Յ. Ն.»-ի հանցանքը շատ ավելի ծանրակշիռ էր ներկայանում, քան «Թ. Հ.» բանաձևով հարուցած ամբաստանությունը: Չարմանալի է նույնիսկ, որ մնացած երեք Ավետարանները (ըստ Մատթեոսի, ըստ Մարկոսի և ըստ Ղուկասի) անշշուկ անցել են «Յ. Ն.» բանաձևի կողքից:

Ուշադրություն է գրավում նաև այն հանգամանքը, որ քահանայապետը (Անանիա) ու նրա խոսնակը մի ամբողջ մեղադրանք են հորինում, թե իբր գոյություն ունեք «Նազորայտական աղանդ»՝ վարկաբեկած լինելու համար Հիսուս

Նազորայոսի գաղափարախոսությունը (Գործք, ԻՂ, 5): Եվ այդ հորինվածքը հյուսվում է Հիսուսի խաչվելուց հետո: Սա էլ մի լրացուցիչ փաստ է, թե որքան գորավոր էր հրեաների աչքում նոր ուսմունքը, որի դեմ քահանայապետերը համառ պայքարում էին, նույնիսկ ուսմունքի հեղինակի մահից հետո: Ի դեպ, անգլերեն տեքստը, որն ամբողջ Նոր Կտակարանում նազարեթցի էր գրում, այս պահին իբրև բացառություն նոր եզր է հորինում. «Nazarenes», փաստորեն, հակասելով «of Nazareth» մշտական բանաձևին: Առհասարակ հասկանալի չէ, թե ինչու միննույն «Նազարայոս» եզրը անգլերենով Հին Կտակարանի համար գրվում է «Նազարայթ», իսկ նորում՝ «Նազարեթ»:

Վերը շարադրվածից հետո, դյուրին կարելի կլինի ընկալել «Նազովրեցի» բառի ստեղծման «գաղտնիքը»: Այսպիսով ունենք՝

հունարենում՝ «Նազոր + այոս»

հայերենում՝ «Նազովր + եցի»:

Մի կողմ դնենք երկու բառերի վերջածանցները: Կունենանք՝

հունարենում՝ «Նազոր»

հայերենում՝ «Նազովր»:

Նույնիսկ անզեն աչքով տեսանելի է այդ բառերի նույնականությունը, բացառությամբ հավելյալ «վ» հնչյունի (տառի) հայերենում:

Ինչպե՞ս է հայտնվել այդ հնչյունը: Աստվածաշնչի դասական թարգմանություններում հաճախ պատճենահանվում են հունարեն բառերը (եզրերը, անձնանունները և այլն), դրանց տալով հայերեն հնչողություն: Օրինակ՝ Լեուի-դևի, Ֆիլիսթրիմ-վիշտացի և այլն:

«Նազովր»-ում «վ» հնչյունի առկայությունը հենց նման ձևով պատճենահանման արդյունք է: Հունարեն շատ բառերի մեջ «o» հնչյունից (օմեգա և օ միկրոն տառերից) հետո հայերենում ավելացվել է «վ» հնչյունը (տառը): Օրինակները բազմաթիվ են. Մոխսե-Մովսես, Նեբրոդ-Նեբրովթ, Իոհան-Հովհան, Լոթ-Ղովթ, Իոսեփ-Հովսեփ և այլն և այլն: Նույն տրամաբանությամբ Նազորից ստացվել է Նազովր:

Այսպիսով, դասական թարգմանիչները միանգամայն օրինաչափ ստեղծել են «Նազովրեցի» բառը իր ժամանակաշրջանի ընկալումների համաձայն: Հետագայում, երկար ժամանակի ու տարածության մեջ «նազովրեցի» բառում ստվերվել է «Նազորը» և գերակայություն է ստացել «վրեցի»-ն, որը նոր ժամանակներում ընկալվել է իբրև առեղծված, ստեղծելով հայտնի խառնաշփոթությունը: Ուստի, կարծում ենք, որ պետք է հրաժարվել «Նազովրեցի» բառից, իբրև ժամանակավրեպ:

Վերոշարադրյալից գտնում ենք թելադրելի՝

Հայերեն գույգ կտակարաններում.

ա) «Նազովրեցու» փոխարեն որդեգրել «Նազովրիթ» տարբերակը: Գործածել թե՛ Հիսուսի և թե՛ Սամիսոնի անունների հետ, ինչպես որ առկա է հունարենում:

բ) «Ղևտացի բառը ունի խճողված կազմություն: Հունարենում Լևիի (Ղևիի) հոգևորական գերդաստանի անդամին կոչում են Լևիտ: «Տ» հնչյունը (տառը)

բառակազմիկ առաքելություն ունի: Այդ «տ»-ն մեխանիկորեն փոխադրվել է հայերենի մեջ, ստանալով արմատակազմիկ իմաստ՝ դնտ-դնտացի: Ղևտացին փոխարինել դնիթով: Սա նույնպես արտահայտում է պատկանելությունը և զուգահեռ է հունարենին: Մանավանդ որ հայերենը ազատագրվում է ժամանակավրեպ «ացիից» և մակաբույծ «տ»-ից:

զ) «Փղշտացի» բառի փոխարեն գրել «փղշտակ»:

Ըստ Աստվածաշնչի, փղշտացիները ունեցել են ինչ-որ տարածք, նույնիսկ թագավոր: Նկարագրությունից հստակ է, որ փղշտացիները հանդես են գալիս իբրև սոցիալական խավ (լուսնայափոխություն, չարչիություն, մանր գործարարություն): Ուստի, նպատակահարմար է «փղշտակը», իսկ նրանց երկիրը և հանրությունը «Փղշտանք» («Փղշտանց»):

դ) «Փարիսեցին» փոխարինել «փարիսակ»-ով, հոգնակիում՝ «փարիսանք»:

“НАЗОВРЕЦИ” И СМЕЖНЫЕ ВОПРОСЫ

КАРЛЕН ДАЛЛАКЯН

Р е з ю м е

В классическом переводе новозаветных текстов на армянском языке в обвинении Понтия Пилата появился термин “назовреци”, что соответствовало греческому “назорайосу”. Он применяется в словосочетании “Иисус назовреци”, что означало посвященность Иисуса Богу с утробы матери. С течением времени первоначальный смысл этого термина был утерян, так как из-за окончания “овреци” термин стал восприниматься совершенно в новом смысле. В современном армянском языке этот термин означает “выходец из местности под названием Назовр”. Ввиду того, что подобной географической местности вообще не существует, многие письменные и устные источники, в том числе и высокопоставленные лица из среды духовенства, начали указывать под этим термином на “Назарет”. (Кстати, в текстах на английском языке вообще пишется “of Nazareth”). Через анализ термина “назовреци” делается вывод, что Назарет здесь вообще не причем. Корень термина идентичен греческому корню “Назор”. Поэтому предлагается в дальнейшем писать “назоврит”. Такое уточнение концентрирует внимание не на какой-то местности, а на сути миссии Иисуса. А это имело определяющее значение в обвинении Понтия Пилата.

“NAZOVRETSI” AND ADJOINING QUESTIONS

KARLEN DALLAKYAN

S u m m a r y

In the classical translation of the New Testament texts into Armenian a term “Nazovretsi” appeared to denote an accusation of Pontius Pilate against Jesus. “Nazovretsi” corresponded to the Greek “Nazoraios”. It

is used in the phrase “Jesus Nazovretsi” that signified Jesus’ devotion to the God from his mother’s womb. In the course of time the initial meaning of this term was lost, and due to the “ovretsi” ending the term began to be comprehended in a completely different way. In modern Armenian the term means “coming from a place called Nazovr”. As there is no such geographical place, many written and oral sources and high office clergy among them started to point at Nazareth for the place the term implies (by the way, in English texts the term is “of Nazareth”). Through the analysis of the term “Nazovretsi” it is inferred that Nazareth has nothing to do here. The root of the term is identical to the Greek root “Nazor”. So, it is suggested that not “Nazovretsi”, but “Nazovrit” should be used henceforward. The introduction of such clarity will concentrate attention not on a place, but on the essence of Jesus’ mission. And that is what mattered in Pontius Pilate’s accusation.